Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 321 - Ա
որոշման

«ԱԴԱ ՔԵՇԻՇՅԱՆՑ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՑՆՈՂ ՀԱՐԹԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	«Լուսաստղ» բարեգործական հասարակական կազմակերպության «Ադա Քեշիշյանց» զարգացման խանգարումներ ունեցող երեխաների սոցիալ-վերականգնողական կենտրոնի համար էլեկտրական բարձրացնող հարթակի անհատույց տրամադրում՝ երեխաների պայմանների բարելավման նպատակով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	ԱՄՆ-ի «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն» (ՍՕԱՐ) հիմնադրամ (150 Ն. Ռադնոր Չեսթեր Ֆ.200, Ռադնոր 19087 Փենսիլվանիա, ԱՄՆ)
4.	Ծրագիրը կատարողը	«Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՕԱՐ)-Հայաստան» բարեգործական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Քանաքեռ-Զեյթուն Թբիլիսյան խճուղի 19, ՀՎՀՀ՝ 00148272)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Վանաձոր Երևանյան խճուղի 111/1, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	6,842,805 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Լուսաստղ» բարեգործական հասարակական կազմակերպության «Ադա Քեշիշյանց» զարգացման խանգարումներ ունեցող երեխաների սոցիալ-վերականգնողական կենտրոն (Լոռու մարզ, Վանաձոր Երևանյան խճուղի 111/1, ՀՎՀՀ՝ 06922436)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի հունիսի 14-ից մինչև 2026 թվականի սեպտեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	«Ադա Քեշիշյանց» զարգացման խանգարումներ ունեցող երեխաների սոցիալ-վերականգնողական կենտրոնի համար էլեկտրական բարձրացնող հարթակի անհատույց տրամադրում՝ 6,842,805 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունիսի 14-ից մինչև 2026 թվականի սեպտեմբերի 30-ը:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը և նախատեսվող գինը	Էլեկտրական բարձրացնող հարթակի պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 6,842,805 դրամ առանց ավելացված արժեքի հարկի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցություն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

04.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ